ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ (XII—XIII ԴԴ.)

Հ. Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում XII դարի վերջում—XIII դարի սկզբում տեղի ունեցած նշանակալի քաղաքական տեղաշարժերը, ինչպես նաև վրացական թագավորությունում իրականացված ներքաղաքական փոփոխությունները նպաստավոր պայմաններ ստեղծեցին հայկական երկրամասերի ազատագրման համար։ Մահմեդական քաղաքական կազմավորումների մի մասի թուլացումը և ազատագրած տարածքները ժառանգական տիրակալության պայմանով ստանալու հեռանկարը բավարար նախադրյալներ էին X դարի վերջի—XI դարի սկզբի բոլոր հայկական թագավորությունները Զաքարյանների իշխանության ներքո կենտրոնացնելու, իսկ հետագայում նաև միավորելու և Հայաստանի անկախությունը վերականգնելու համար։ Այդ կարևորագույն խնդիրը մինչև մոնղոլական արշավանքները չլուծվեց, իսկ այնուհետև ընդհանրապես դարձավ անհնարին։ Ուստի սևեռում ուշադրության է արժանի այն արտաքին քաղաքական հանգամանքների և ներքին գործոնների լուսաբանումը, որոնց պայմաններում տեղի ունեցավ հայկական երկրամասերի ազատագրումը։ Անհրաժեշտ է ճշգրիտ գնահատական տալ այլևայլ տարածաշրջանների ազատագրման ընթացքին և հեռանկարներին, որը և հնարավորություն կընձեռի հիմնավոր եզրակացությունների հանգել Զաքարյան իշխանների գործունեության տարբեր փուլերի մասին։

XII դարի վերջում—XIII դարի սկզբում Հայաստանում ծավալված ազատագրական պայքարի համակողմանի պարզաբանման տեսանկյունից առաջնահերթ կարևորություն է ներկայացնում խնդրի ռազմաքաղաքական կողմի լուսաբանումը։ Զաքարյանների ղեկավարած ազատագրական պայքարը ժամանակագրական և տարածքային առումներով հետազոտելիս մշտապես պետք է նկատի ունենալ նաև մահմեդական քաղաքական կազմավորումների ուժերի հարաբերակցության մեջ տեղի ունեցող վայրիվերումները, այդ ամիրայությունների ներսում ընթացող ուշագրավ սոցիալ-քաղաքական անցուդարձերը։ Բանն այն է, որ պատմական երկերի հեղինակները (Կիրակոս Դանձակեցի, Վարդան Արևելցի, Ստեփանոս Օրբելյան, Թամար թագուհու պատմիչներ) ամփոփ ներկայացնելով Զաքարյանների վարած մարտերի արդյունքները, անհամեմատ սակավ չափով են լուսաբանում պայքարի տարբեր փուլերում հարձակման հիմնական ուղղությունների, գլխավոր հարվածի նպատակակետի փոփոխության հետ կապված հարցերը։ Ուշադիր հետազոտությունը ցույց է տալիս, որ այդ հարցերին կարելի է պատասխան տալ մահմեդական պետական կազմավորումների ներքին և արտաքին պատմության անցուդարձերը համադրելով հայ-վրացական զորքերի մղած մարտերի տարեգրության հետ։

Ներքաղաքական փոփոխությունները, սոցիալական տեղաշարժերը իրենց ցայտունորեն զգացնել տվեցին Ելտկուզյանների և Շահ-Արմենների տիրապետությանը ենթակա երկրամասերում։ Թե՛ Ելտկուզյանները և թե՛ Շահ-Արմենները մեծապես հենվում էին զինվորական ավագանու վրա, զինվորական ծառայության դիմաց զորահրամանատարներին շնորհելով ընդարձակ տիրույթներ։ Որոշակի ծավալ և խորություն ձեռք բերած ավատատիրականացման պրոցեսի հետևանքով, նախկին «ղուլամները» («ստրուկները», ծա-

ոանները») դառնում էին խոշոր հողատերեր՝ սկսում էին հակադրվել իրենց գերականներին։ Զգալի չափով ներքին զարգացման հետևանք էր նաև Գանձակի Ելտկուզյան աթաբեկության թուլացումը։ Հայկական աղբյուրների վկայությամբ, մինչև իր մահը Ելտկուզ աթաբեկը «բաժանեալ էր զաշխարհն իւր երկու որդւոցն. և տուեալ էր զԽորասան և զԱրաշ և զներքին բաժինն Պարսից Խզլ Ասլանին, որ թարգմանի կարմիր առիւծ. և զվերին կողմն Պարսից և զԱտրպատական և զԱռան և զնախջաւան՝ Փահլաւանին»[1]։ Մուհամեդ Փահլավանի (1176—1186) և Խզիլ Արսլանի (1186—1191) օրոք թեև Գանձակի աթաբեկությունը դեռևս պահպանում էր հզորությունը, այնուամենայնիվ գրվել էին ապագա թուլության հիմքերը։ Ներքին բաժանմանը հաջորդեց բացահայտ պայքարը աթաբեկության ժառանգորդների միջև։ Այսպես, Խզիլ Արսլանը 1191 թ. հաղթելով սելջուկյան սուլթան Ռուքն ադ-դին Տուղրիլ III-ին (1176—1194) իրեն սուլթան հռչակեց, բայց քիչ անց սպանվեց և սկսվեց նրա պետության սրընթաց անկումը։ Անժառանգ Խզիլ Արսլանի մահից հետո Մուհամեդ Փահլավանի չորս որդիների միջև բռնկված երկարատև կռիվները նվազեցրին այն դերը, որ խաղում էին Ելտկուզյանները Մերձավոր Արևելքի քաղաքական կյանքում, զգալիորեն դյուրացրեցին Հայաստանի կենտրոնական շրջանների, Սյունիքի, Ուտիքի, Արցախի ազատագրման գործը։ Շամքորի ճակատամարտում պարտություն կրելուց հետո Ելտկուզյան Նուսրաթ ադ-դին Արու Բաքրը (1195—1210) հարկադրված էր պաշտպանական քաղաքականություն վարել։ Նրա եղբայր Ուզբեկի (1210—1225) օրոք Ելտկուզյան աթաբեկությունը ստիպված էր դիմել հզոր խորեզմշահերի պաշտպանությանն ու հովանավորությանը[2]։ Այն չկարողացավ հարատևել մինչև մոնղոլական տիրապետության հաստատումն Անդրկովկասում, արդեն 1225 թ. աթաբեկության տարածքը գրավեց խորեզմշահ Ջալալ ադ-Դինը[3]։

XII դարի 80-ական թթ. կեսերին կարևոր իրադարձություններ ծավալվեցին նաև Շահ-Արմենների ամիրայությունում։ Երկար տարիներ իշխելուց հետո, «ի ՈՂԴ թվին մեռանի Շահիարմեն սուլտանն Խլաթայ (տպ. Իզաթայ) ի գեօղն, որ կոչի Սարթհան»,— գրում է Սամվել Անեցու երկը շարունակողներից մեկը[4]։ Ըստ Աբու-լ-Ֆեդայի, Նասիր ադ-դին Սուքման II-ի «մահվան լուրն առավ իր մամլուք Բեկթիմուրը, որը գտնվում էր Մուֆարրիջնում, շուտով ճամփա ելավ և հասավ Խլաթ, որի բնակիչների մեծ մասը փափագում էին, որ նա լինի իշխան, և Շահրիմանի մամլուքներն էլ համաձայնել էին նրա հետ, ուստի հազիվ հասած, նրան թագավոր կարգեցին Խլաթի վրա և նստեցրին Շահրիմանի գահին»[5]։ Հայկական սկզբնաղբյուրի հանգամանալից տեղեկություններից երևում է, սակայն, որ Բեկթամուրի իշխանության հաս-

---

[1] Ստեփանոս Օրբելյան. Պատմութիւն նահանգին Սիսական. Թիֆլիս, 1910, էջ 393. Հմմտ. Վարդան. Հաւաքումն Պատմութեան. Վենետիկ, 1862, էջ 130—131։

[2] Տե՛ս Шихаб ад-Дин Мухаммад ан-Насави. Жизнеописание султана Джалал ад-Дина Манкбурны. Перевод с арабского, комментарии, примечания и указатели З. М. Буниятова. Баку, 1973, с. 45—46, 61.

[3] Ելտկուզյանների աթաբեկության XII դարի վերջի—XIII դարի սկզբի պատմության մասին տե՛ս C. E. Bosworth. The Political and Dynastic History of the Iranian World (A. D. 100'—1217).—The Cambridge History of Iran. Vol. 5, Cambridge, 1968, p.179, 181—182; З. М. Буниятов. Государство атабеков Азербайджана. Баку, 1978, с. 88—128.

[4] Սամվել Անեցի. Հաւաքմունք ի գրոց պատմագրաց. Վաղարշապատ, 1893, էջ 140։

[5] Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին (Ցակուտ ալ-Համավի, Աբու-լ-Ֆեդա, Իբն Շադդադ), կազմեց Հ. Նալբանդյանը, Երևան, 1965, էջ 223 (այսուհետև՝ Արաբական աղբյուրները)։ Աբու-լ-Ֆեդան Սուքման II-ի մահը դնում է հիջրի 579 թ. (1183 թ. ապրիլի 26—1184 թ. ապրիլի 13) վերջին։ Ստեփանոս Օրբելյանին վերագրվող ժամանակագրության մեջ (տե՛ս Ստեփանոս Օրբելյան. Ժամանակագրութիւն. Երևան, 1942, էջ 19)

տատումը ամենևին էլ անարգել և առանց ցնցումների տեղի չի ունեցել, «ոչ էր հաստատեալ սթ[ոռ] բռնակալութեան աշխարհին, զի ոչ ու[նէր] ժառանգ թագաւորութեան իւրոյ Շահիաբմէնն, վասն որոյ իւրաքանչիւր ոք ազգակաբար բաղում սպանութիւնս գործէր»[6]։ «Մեռաւ Շահի Արմէնն անորդի, և աւեր և սուր և գերութիւն բազմացաւ ի վերայ աշխարհից նորա ի շրջակայ ազգացն»,— լրացնում է Վարգան Արևելցին[7]։

Առանձնապես սուր պայքար բորբոքվեց Բեկթամուրի և Կարինի Սալդուխյանների միջև հանուն Ուխտիսի (Օլթի)։ Վարգան Արևելցու և Թամար թագուհու առաջին պատմիչի տեղեկությունների հիման վրա, սովորաբար, ենթադրվել է, որ Շահ-Արմեններին է պատկանել, բացի Խլաթից և շրջակա գավառներից, հյուսիսում նաև Արշարունիքը[8]։ Բավարար ուշադրության չի արժանացել Վարդան Արևելցու մեկ այլ վկայությունը, ըստ որի՝ Շահ-Արմենի ստորակա Դարաչա ամիրային էր պատկանում «զԿեչրօր և զՈւխթիսն և զամենայն ձորն Ծրասխայ»։ Դարաչա ամիրան 1182 թ. սպանվեց Շահ-Արմենի ձեռքով[10], և նրա տիրույթները, ամենայն հավանականությամբ, անմիջականորեն անցան Շահ-Արմենին։ Ինչպես վկայվում է Ստեփանոս Օրբելյանին վերագրվող ժամանակագրությունում, «ի նմին ամին թշուառութեան, բռնակալն Կարնոյ քաղաքի յարուցեալ ի վերայ անառիկ բերդին Աւղթիքն անուանեալ. և առ զնա յաւուրս տաւնի աստուածածնին. իսկ ի գալ աշնանային աւուրց, յաւուրս տաւնի խաչգիւտին, Բէկթամուրն (տպ. բէկ Թամուրն), որ և եղև աթոռակալ Շահի արմէնին, որ էր զաւրապետ զաւրաց նորա, յարուցեալ բազում զաւրաւք եկն ի դուռն Կարնոյ քաղաքին, դարձուցանել զՈւխթիքն ի յառաջին տէրն իւր. և իբրև ոչ լուաւ, առ զերկիրն ամենայն յաւարի։ Եւ մասն մի ի քաղաքէն հրով այրեաց և զԲասեանսն զերկոսեանսն ի գերութիւն վարեաց, որ և զհամար գերութեան ՀՌ ասացին, զորս զտին և գնեցին, թող զկորուսեալսն»[11]։

Այսպիսով, Շահ-Արմենների պետության սահմանները ոչ միայն տարածվում և «հասնում էին մինչև այժմյան Կաղզվանի կողմերը»[12], այլև հյուսիս-արևմուտքում նրա տիրույթները ընդգրկում էին նույնիսկ Ուխտիսը։ Արևմուտքում Սուքման II-ին էր պատկանում նաև Տողատափը, իսկ հարավում՝ Մուշը և Սասունը[13]։ Ավելին, «ի նոյն ամի էառ Բէկթամուրն զՎան և զՈստան և զԲաղէշ։ Զերկիրն այրեաց մինչև հնազանդեցոյց ընդ իւրով իշխանութեամբ»[14]։ Հետևաբար, XII դարի 80-ական թթ. Շահ-Արմենների պետությունը ընդարձակվեց, ընդգրկելով Վանա լճից հարավ և արևելք ընկած երկրա-

---

նշվում է ՈԼ (1181/2) թվականը (ինչպես երևում է, գրիչը բաց է թողել վերջին տառը, որը, հավանաբար, եղել է «Դ»)։ Իբն ալ-Ասիրը (տե՛ս Իբն ալ-Ասիր. Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ա. Տեր-Ղևոնդյանի. Երևան, 1981, էջ 269)։ Սուքման II-ի մահը թվագրում է 1185 թ. հունիսով, որը հաստատվում է Ստեփանոս Օրբելյանին վերագրվող ժամանակագրության տվյալներով՝ «զի ժամ էր հնձոց» (Ստեփանոս Օրբելյան, էջ 20)։

6 Ստեփանոս Օրբելյան. Ժամանակագրութիւն, էջ 20։

7 Վարգան. Հաւաքումն Պատմութեան, էջ 133։

8 Տե՛ս Հ. Մանանդյան. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության.—Երկեր, հ. Գ, Երևան, 1977, էջ 114—115։ Հ. Մարգարյան. Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր. Երևան, 1980, էջ 64։

9 Վարգան. Հաւաքումն Պատմութեան, էջ 132։

10 Տե՛ս նույն տեղում։

11 Ստեփանոս Օրբելյան. Ժամանակագրութիւն, էջ 20։

12 Հ. Մանանդյան. նշվ. աշխ., էջ 114, հմմտ. Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Երևան, 1976, էջ 488։

13 Տե՛ս Հ. Մանանդյան. նշվ. աշխ., էջ 111։

14 Ստեփանոս Օրբելյան. Ժամանակագրութիւն, էջ 20։ Բեկթամուրը Բաղեշը գրավեց Սրզնի և Բաղեշի տեր Ահրաքյաններից. տե՛ս Իբն ալ-Ասիր, էջ 342։

մասերը Բաղեշից մինչև Վան և Ամյուկ[15]։ Այսպիսով, Շահ-Արմենների երկու հզոր հարևանները՝ Ելտկուզյան Մուհամեդ Փահլավանը և Էյուբյան Սալահ ադ-Դինը (1169—1193), որոնք պայքարի մեջ մտան Սուքման II-ի ժառանգությանը տիրելու նպատակով[16], էական հաջողության հասնել չէին կարող Շահ-Արմենների դեռևս կայուն պետության դեմ։

Բեկթամուրը իշխեց Խլաթում մինչև 1193 թ., երբ այդ տարվա մայիսին սպանվեց իր իսկ փեսայի՝ Բադր ադ-դին Ակ-Սոնկուր Հազարդինարիի կողմից, որը և դարձավ նրա հաջորդը Շահ-Արմենների գահի վրա[17]։ Հատկանշական է այն հանգամանքը, որ Բեկթամուրից սկսած Շահ-Արմենների պետության գլուխ էին կանգնում հիմնականում նրանց նախկին մամլուքները։ Հազարդինարիի մահից (հիջրի 524 թ.—13/XI 1197—2/XI 1198 թթ.) հետո Շահ-Արմենների պետությունը գլխապտույտ արագությամբ ի կործանում գընաց։ Հազարդինարիին յոթ օրով հաջորդեց հայազգի մամլուք Խեշտաշահ Կութլուղը[18], որի սպանությունից հետո մինչև հիջրի 602 թ. (18/VIII 1205—7/VIII 1206 թթ.), վերանվանվելով Մալիք Մանսուր, իշխեց Բեկթամուրի որդի Մահմադը[19]։ Այս վերջինը ևս սպանվեց մամլուք Իզ ադ-դին Բալբանի կողմից, որն էլ, իր հերթին, դարձյալ մեռավ բռնի մահով, մեկ տարի իշխելուց հետո[20]։ Շահ-Արմենների ժառանգության շուրջ բռնկված պայքարում, Ելտկուզյանների թուլացումից օգտվելով, հաղթող դուրս եկան Էյուբյանները, որոնք XII դարի 90-ական թթ. սկսած փորձում էին զենքի ուժով տիրանալ Խլաթի իշխողներին պատկանող երկրամասերին։ Այսպես, 1191 թ. Խլաթը և Մանազկերտը պաշարեց Սալահ ադ-Դինի եղբորորդի Մալիք Մուղաֆֆար Թակի ադ-դին Օմարը, սակայն նրա հանկարծակի մահվան պատճառով այդ արշավանքը անհաջողությամբ վերջացավ[21]։ Ապարդյուն էր նաև Սալահ ադ-Դինի եղբայր Մալիք Ադիլի 1194 թ. արշավանքը, որի մասին ուշագրավ վկայություն է պահպանվել հայկական աղբյուրներում. «ՌՃՂԶ:ՈԽԳ—Մէլիք Էդիլն եկն ի Խլաթ պաշարեաց և չկարաց առնուլ»[22]։ 1207 թ.[23] Խլաթի վրա հարձակվեց Էյուբյան Մալիք Ադիլի որդի Մալիք ալ-Աուհաղը, բայց պարտություն կրեց Բալբանի և Կարինի տիրակալ Տուղրիլ-շահի միացյալ զոր-

---

15 Ամյուկը գրավել էր դեռևս Սուքման II-ը (տե՛ս Վարդան. Հաւաքումն Պատմութեան, էջ 124), հետևաբար Բեկթամուրն ամբողջացրել էր Վանա լճի ափի տիրույթները։

16 Տե՛ս C. E. Bosworth. Op. cit., p. 171.

17 Տե՛ս Իբն ալ-Ասիր, էջ 279։ Արաբական աղբյուրները, էջ 225—226։

18 Տե՛ս Արաբական աղբյուրները, էջ 226։ Հ. Նալբանդյանն առաջարկում է Խեշտաշահին նույնանձնացնել Սասունի Թոնիկյան-Մամիկոնյաններից Վիգենի թոռ Շահնշահի հետ, քանի որ, ըստ Աբու-լ-Ֆեդայի, Խեշտաշահ Կութլուղը ծագումով Սասունից էր (տե՛ս նույն տեղում, էջ 265, ծան. 60)։

19 Իբն ալ-Ասիր, էջ 289—290։ Արաբական աղբյուրները, էջ 226։

20 Տե՛ս Իբն ալ-Ասիր, էջ 291—292։ Արաբական աղբյուրները, էջ 226։

21 Տե՛ս Իբն ալ-Ասիր, էջ 276—277։ Արաբական աղբյուրները, էջ 224։

22 Ստեփանոս Օրբելյան. Ժամանակագրութիւն, էջ 22։ Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ., կազմեց Վ. Հակոբյանը. հ. 1, Երևան, 1951, էջ 36։

23 Մալիք ալ-Աուհագի հարձակումը և ապա քաղաքին տիրանալը Իբն ալ-Ասիրը և Աբու-լ-Ֆեդան նշում են հիջրի 604 թ. (28/VII 1207—15/VII 1208 թթ.), սակայն վերջինիս տվյալները թույլ են տալիս էյուբյանների հաստատումը Խլաթում ճշգրիտ թվագրել 1207 թ.։ Բանն այն է, որ Բալբանի իշխանության գլուխ անցնելը պատմիչը դնում է հիջրի 602 թ. (18/VIII—1205—7/VIII 1206 թ.), իսկ տիրապետության տևողությունը սահմանափակում է «շուրջ մի տարի»-ով։ Հետևաբար, եթե Բալբանը հաստատվել է Շահ-Արմենների գահին հիջրի 602 թ. անգամ երկրորդ կեսին՝ 1206 թ., ապա նրա գահակալությունը ընդհատվել է արդեն 1207 թ.։ Իբն ալ-Ասիրը Բալբանի տիրանալը Խլաթին նշում է մեկ տարով ուշ՝ հիջրի 603 թ. (8/VIII 1206—27/VII 1207 թթ.), բայց եթե Բալբանի իշխանության սկզբի համար ելակետային ընդունենք 1206 թ., ապա երկու պատմիչների թվագրումների միջև տարաձայնությունը ինքնըստինքյան կվերանա։

քերից։ Հաղթանակից հետո Տուղրիլ-շահի կողմից Բալբանը սպանվեց, սակայն Խլաթին տիրելու նրա եռանդուն ջանքերը արդյունք չտվեցին։ Խլաթի և Մանազկերտի ապարդյուն պաշարումից հետո Տուղրիլ-շահը ձեռնունայն վերադարձավ Կարին, իսկ Խլաթի բնակիչները, բանակցություններից հետո, քաղաքը հանձնեցին Մալիք Աուհադին[24]։

1207 թ. իրադարձությունների առիթով Իբն ալ-Ասիրը պատմում է մի միջադեպի մասին, որը թույլ է տալիս ավելի ընդգրկուն պատկերացում կազմել նաև նախորդ տարիներին Խլաթում ծավալված դեպքերի մասին։ Ըստ պատմիչի, «երբ ալ-Մալիք ալ-Աուհադ Նաջմ ալ-Դին ալ-Ադիլը գրավեց Խլաթն ու նրա գավառները, այնտեղից գնաց Մանազկերտ, որպեսզի այնտեղ ևս կարգ հաստատի և անի ինչ որ անհրաժեշտ էր։ Երբ Խլաթից դուրս եկավ, բնակիչներն ըմբոստացան տեղի զորքի դեմ և դուրս քշեցին։ Նրանք ապստամբեցին, պաշարեցին ամրոցը, որտեղ ալ-Աուհադի մերձավորներն էին և Շահ Արմանի նշանաբանով կոչ արեցին, թեպետև նա վաղուց մեռած էր։ Սրանով ուզում էին ասել, թե պետք է իշխանությունը վերադարձնել [նախկին] տերերին ու նրանց մամլուքներին։

Լուրը հասավ ալ-Մալիք ալ-Աուհադին, որը վերադարձավ նրանց մոտ։ Մինչ այդ նա զորք էր ստացել Ջաղիրայից, որի շնորհիվ ուժեղացավ ու պաշարեց Խլաթը։ Բնակիչների մեջ տարաձայնություն կար՝ մի մասը հակվեց նրա կողմը՝ ի հեճուկս ուրիշների։ Նա տիրեց [Խլաթին] և բնակիչներից մեծ բազմություն կոտորեց, մեծամեծների մի խումբ գերեց ու տարավ Նփրկերտ, ընդ որում ամեն օր մարդ էր ուղարկում ու մի մասին սպանել տալիս և միայն քշերը փրկվեցին։ Այս դեպքից հետո Խլաթի բնակչությունը ստորացած վիճակում էր, իսկ երիտասարդների մեջ տարակարծություն կար։ [Նախապես] նրանց ձեռքում էր իշխանությունը և [այժմ] մարդիկ ազատվեցին նրանց չարագործություններից, քանզի մեկին թագավոր էին նշանակում, մյուսին՝ սպանում, իսկ պետությունը հեղինակություն չուներ, որովհետև ամբողջ իշխանությունը նրանց ձեռքում էր»[25]։ Մեջբերված ընդարձակ հատվածում առավել ուշագրավն այն տողերն են, որոնք պատմում են «երիտասարդների» կառավարման և նրանց «չարագործությունների» մասին։ Պատմիչը կարծես ակամա է թույլ տալիս այդ փոքրիկ զեղումը. ակնհայտ է, որ նա չի ցանկանում ավելին հաղորդել իր համար ատելի դեպքերի մասին։ Իբն ալ-Ասիրի պատմությունը և հատկապես «երիտասարդ» բնութագրական տերմինը այնուամենայնիվ բավական են որոշակի գաղափար տալու համար Խլաթում ստեղծված դրամատիկ իրադրության և ազդեցիկ սոցիալական շարժման մասին։ Արաբական ու պարսկական աղբյուրներում «շարաբ» (ինչպես նաև որպես հոմանիշներ գործածվող «ջևանմարդ», «կուդեկան», «ֆիթիան») տերմիններով նշվում են քաղաքային բնակչության որոշակի խավերը, որոնք միավորված էին հայկական «եղբայրություններին» համանման կազմակերպություններում՝ «ախիներում»[26]։ Մերձավորարևելյան քաղաքներում «երիտասարդների» գործողությունները երբեմն այնպիսի չափեր էին ձեռք բերում, որ նրանք, գլխավորելով քաղաքային ստորին խավերի պայքարը, կամ հանձնում էին քաղաքը իրենց համար ցանկալի թեկնածուին, կամ էլ իրենք էին վերցնում իշխանությունը։ X—XI դդ. իրադարձությունները ճիշտ նման ընթացք ընդունեցին անդրկովկասյան քաղաքներից Բայլականում և Գանձա-

---

24 Տե՛ս Իբն ալ-Ասիր, էջ 291—293; Արաբական աղբյուրները, էջ 226—228։

25 Իբն ալ-Ասիր, էջ 293։

26 Տե՛ս D. Kouymjian. The Canons Dated 1280 of the Armenian Akhi Type Brotherhood of Erzinjan.—Études arabes et islamiques. I—Histoire et civilisation. Vol. 2, Paris, 1975, p, 107—108; М. В. Габашвили. Из истории социальных движений в Грузии XII века.— Кавказ и Византия, вып. 4. Ереван, 1984, с. 21—25.

կում[27], բայց առավել ցցուն էր Թբիլիսիի օրինակը, որտեղ շուրջ 40 տարի (1082—1122 թթ.) կառավարումն իրականացնում էին «շարաբները»[28], Խլաթի մասին Իբն ալ-Ասիրի վկայությունները, բավական ընդարձակ լինելով, թույլ են տալիս ուրվագծել քաղաքային բնակչության տարբեր խավերի դիրքորոշումն այդ ժամանակահատվածի ճակատագրական դեպքերի ժամանակ և հետևել «հասարակ բնակչության» և նրա առաջնորդ «երիտասարդների» դերի աճին մեկուկես տասնամյակի ընթացքում։

1185 թ. Սալահ ադ-Դինի կողմից Խլաթը գրավելու փորձի մասին պատմելիս հեղինակը ընդգծում է խլաթցիների վերնախավի ցուցաբերած նախաձեռնությունը. «Իսկ (Սալահ ալ-Դինը) տատանվում էր և ահա այնպես պատահեց, որ Խլաթի (Խիլաթ) մի քանի երևելի բնակիչներից ու ամիրաներից նամակներ եկան, հրավիրելով նրան քաղաքը գրավելու»[29]։ Իրականում, սակայն, խլաթցի մեծամեծները գործել են նախապես մշակված ծրագրով՝ օգտագործել Սալահ ադ-Դինի և Մուհամեդ Փահլավանի հակասությունները՝ քաղաքի անկախությունը պահպանելու նպատակով։ Բանն այն է, որ Ելտկուզյան աթաբեկը «իր աղջկան ամուսնացրել էր Շահ Արմանի հետ, թեկուզ վերջինս մեծահասակ էր, որպեսզի այդ ճանապարհով տիրի Խլաթին (Խիլաթ) ու նրա գավառներին։ Երբ [Խլաթում] լսեցին նրա մերձենալու մասին, դրեցին Սալահ ալ-Դինին, հրավիրելով, որ ստանձնի երկրի իշխանությունը, որպեսզի նրա միջոցով հաղթեն Բահլավանին, իսկ նրան էլ ետ մղեն Բահլավանի միջոցով, և երկիրը իրենց կմնար»[30]։ 1185 թ. խլաթցիների վերնախավին լիովին հաջողվել է իր ազդեցության ներքո պահել քաղաքային բնակչությանը, որը ինքնուրույնաբար, սեփական ծրագրով հանդես չի եկել։ «Երևելի բնակիչները և ամիրաները», առանց ներքին դժվարությունների հանդիպելու, իրականացրել են իրենց մտահղացումը. «Բահլավանը գնաց Խլաթ (Խիլաթ) և դնում էին սուրհանդակները Խլաթի բնակչության ու նրա, ինչպես նաև [Խլաթի] ու Սալահ ալ-Դինի միջև։ Վերջապես նրանք (Խլաթի ժողովուրդը) իրենց գործերը կարգավորեցին Բահլավանի հետ և դարձան նրան կողմնակից ու հպատակության խոթբա տվեցին»[31]։ Պատմիչի խոսքերից դժվար է ենթադրել, թե 1185 թ. Խլաթում սոցիալական նշանակալի շարժում է տեղի ունեցել, որի ընթացքում առանձնացել են բնակչության ստորին շերտերը։ Այս եզրահանգման օգտին են վկայում մինչև 1193 թ. ծավալված անցուդարձերը, երբ Խլաթի ամիրայությունը, ինչպես տեսանք, պահպանում էր ռազմական հզորությունը և նույնիսկ ընդարձակել էր սահմանները։ Խլաթում անկայուն դրության առաջացման մասին Իբն ալ-Ասիրը խոսում է նաև 1193 թ. դեպքերի առիթով, երբ պատմում է Սալահ ադ-Դինի մահվանը հաջորդող երկու ամսվա ընթացքում Խլաթի տիրակալ Բեկթամուրի ձեռնարկումների մասին։ Ցնծությամբ ընդունելով հրը էյուբյանի մահվան լուրը, նա երազում էր նոր հաջողությունների մասին, բայց «նրա մոտ խանգարում և շփոթություն առաջացավ և պատրաստվեց գնալ արշավանքի Նփրկերտ (Մայյաֆարիկին), այն պաշարելու նրպատակով, սակայն մահը վրա հասավ»[32]։ Թեև պատմիչը չի ծավալվում

---

27 Տե՛ս В. М. Беплис. Мас'уд ибн Намдар и городское население Байлакана.— Известия АН АзССР (серия истории, философии и права), 1966, № 3, с. 50—63; Հ. Խաչատրյան. Ֆիթյանների մյուրիները և նրանց պայքարը քաղաքային ինքնավարության համար Հայաստանում (X—XIII դդ.).—Երիտասարդ արևելագետների հանրապետական գիտական նստաշրջանի թեզեր. Երևան, 1984, էջ 8—9։

28 Տե՛ս შ. მელიქიშვილი. საქალაქო კომუნა ძველ საქართველოში. თბ., 1962; მ. გაბაშვილი. საქართველოს ქალაქები XI—XII საუკუნეებში. თბ., 1981, გვ. 63—82.

29 Իբն ալ-Ասիր, էջ 269։

30 Նույն տեղում, էջ 270։

31 Նույն տեղում։

32 Իբն ալ-Ասիր, էջ 279։

«խանգարման և շփոթության» էության և հանգամանքների շուրջ, այնուամենայնիվ, թվում է, տեղի է ունեցել սովորական պալատական հեղաշրջում. «Զահիր ալ-Դին Շահ-Արմանի մամլուքներից մեկը՝ Հազարդինարին, ուժեղացել էր, շատ կողմնակիցներ ուներ և ամուսնացել էր Բաքտամուրի աղջկա հետ։ Եվ ահա նա ցանկացավ իշխանությանը տիրանալ և մարդ ուղարկելով սպանել տվեց նրան»[33]։ Հազարդինարիի կառավարման ժամանակաշրջանի մասին կցկտուր տեղեկություններ են պահպանվել աղբյուրներում, ուստի հարկադրված ենք բավարարվել XIII դարի առաջին տարիների մասին Իբն ալ-Ասիրի հաղորդած տվյալներով։ Արաբ հեղինակը նշում է հիջրի 601 (29/VIII 1204—17/VIII 1205 թթ.) և 602 (18/VIII 1205—7/VIII 1206 թթ.) թվականներին «քուրջերի»[34] երեք արշավանքների մասին դեպի Խլաթի ամիրայություն, հետևյալ կերպ բացատրելով այդ իրադարձությունների հետ կապված իրավիճակը. «Քանդի նրա տերը մանուկ էր, իսկ իրական կառավարողը իշխանություն չուներ զորքի վրա»[35]։ Այսպիսով, Իբն ալ-Ասիրը առաջին անգամ որպես Խլաթում ծավալվող դեպքերի կարևոր մասնակից, հիշատակում է զորքը, որը, միանգամայն օրինաչափորեն, իր վճռական խոսքը պետք է ասեր զգալի չափով ռազմական ուժի վրա հենվող ամիրայությունում։ Բանակի դերը որոշիչ էր 1206 թ.[36] սկսված դեպքերի ժամանակ, երբ «Խլաթի (Խիլաթ) զորքը ձերբակալեց իր տիրոջը՝ Բաքտամուրի որդուն, և տեր դարձավ Բալբանը (Բալաբան)՝ Շահ Արման իբն Սուքմանի մամլուքը»[37]։ Իբն ալ-Ասիրի Պատմության հաջորդ տողերից, սակայն, երևում է, որ ներքաղաքական կացությունը Խլաթի ամիրայությունում ավելի բարդ է եղել և զորքի ելույթը ազդանշան է ծառայել ուշագրավ սոցիալական շարժման համար։ Պատահական չէ, որ իրադարձությունների այս փուլում արդեն հիշատակվում է «հասարակ ժողովուրդը», զորքի հետագա գործողությունները այլևս միասնական ձեռնարկումներ չեն դիտվում պատմիչի կողմից։ Դժգոհությունը Բեկթամուրի որդու կառավարումից, մինչև նրա ձերբակալումը, համընդհանուր երևույթ է ներկայացվում. «Բաքտամուրի որդին դեռ տղա էր ու անփորձ։ Նա ձերբակալել էր Շահ Արմանի մամլուքներից ամիր Շուջա ալ-Դին Կուտլուղին, որը նրա աթաբեկն էր ու երկրի կառավարիչը և լավ վերաբերմունք ուներ զինվորների ու հասարակ ժողովրդի նկատմամբ։ Երբ սրան սպանեց, զինվորները և հասարակ ժողովուրդը դժգոհեցին, իսկ ինքը (Բաքտամուրի որդին) զբաղված էր հաճույքներով, խաղամոլությամբ, հարբեցողությամբ։ Եվ ահա Խլաթի ժողովրդից ու զինվորներից մի խումբ գրեց Մարդինի տիրոջը՝ Նասիր ալ-Դինին, հրավիրելով իրենց մոտ... Սակայն Շահ Արմանի մամլուքներից մեկը, որի անունն էր Բալբան, Բաքտամուրի տղայի նկատմամբ թշնամական պիրք բռնեց և, ըմբոստանալով նրա դեմ, Խլաթից հեռացավ Մանազկերտի երկիրը, տիրացավ նրան, զորք հավաքեց մեծ բաղմությամբ ու գնալով Խլաթի դեմ, ուղեց գրավել այն»[38]։ Հետևաբար, ինչպես և 1185 թ., Խլաթի նկատմամբ հավակնություններով հանդես եկան երկու հակառակորդ ուժեր՝ Մարդինի Արտուխյան տիրակալ Նասիր ադ-Դին Արտուխ-Արսլանը (մոտավորապես 1201—1239)[39] և Բալբանը։ Բայց այս անգամ դրությունը բարդաց-

---

33 Նույն տեղում։

34 Ա. Տեր-Ղևոնդյանի բացատրությամբ՝ «քուրջ են կոչվում ոչ միայն Վրաստանը, նրա ժողովուրդը և թագավորները, այլև Հյուսիսային Հայաստանը, նրա հայ ազգաբնակչությունը և Խաչարյան իշխանապետության բոլոր հայ զորավարներն ու ռազմիկները» (տե՛ս Իբն ալ-Ասիր, էջ 398, ծան. 280)։

35 Իբն ալ-Ասիր, էջ 286։

36 Իրադարձությունների թվագրման համար տե՛ս ծան. 23։

37 Իբն ալ-Ասիր, էջ 289։

38 Նույն տեղում։

39 Տե՛ս К. Э. Босворт. Мусульманские династии. М., 1971, с. 166.

նում էր այն հանգամանքը, որ երկուսն էլ կողմնակիցներ ունեին քաղաքի ներսում։ Պատմիչի «ժողովրդից ու զինվորներից մի խումբ» արտահայտությունը պատահական համարել չի կարելի այն առումով, որ զորքի մի մասը ոչ միայն պաշտպանում էր Բալբանին, այլև միայն նրա օգնությամբ Բալբանը կարող էր գրավել «Մանազկերտի երկիրը»։ Ավելին, Մարդինի տիրակալին փորձեց խանգարել Խառանի և Ջազիրայի կառավարիչ Էյուբյան ալ-Մալիք ալ-Աշրաֆը, բայց հաջողության չհասավ[40]։ Իրենց հերթին, խլաթցիները չշտապեցին քաղաքը հանձնել Մարդինի տիրոջը, որը «կանգնեց Խլաթին մոտիկ վայրում մի քանի օր»[41]։ Ուստի Բալբանը նախ խորամանկությամբ Խլաթից հեռացրեց անհաջողակ Արտուխյանի բանակը, ապա, ահաբեկելով նրան, ստիպեց վերադառնալ Մարգին[42]։ Իբն ալ-Ասիրի ամբողջ պատմից այն եզրակացությանը կարելի է հանգել, որ Բեկթամուրի որդու գահ բարձրանալուց հետո (1197/1198 թթ.) Խլաթում փաստական իշխանությունը պատկանել է «զորքին և հասարակ ժողովրդին», որոնց նախաձեռնությամբ ու թելադրանքով էլ տեղի են ունեցել բոլոր կարևոր իրադարձությունները։ Այս հետևության օգտին են խոսում Խլաթը գրավելու ուղղությամբ Բալբանի ձեռնարկած երկու փորձերի նկարագրությունները։ Առաջին դրվագը հաստատում է այն միտքը, որ զորքի մի մասը լքել էր Խլաթը և միացել Բալբանին, ինչպես նաև վկայում է «հասարակ ժողովրդի» ուշագրավ վարքագծի մասին։ Պարզվում է, որ քաղաքային հասարակության այդ խավը փոփոխված իրադրության պայմաններում հանդես է եկել Բեկթամուրի որդու օգտին։ «Բալբանը զորք հավաքեց ու պաշարեց Խլաթը, նեղեց բնակիչներին։ Այնտեղ էր Բաքտամուրի տղան, որը քաղաքում եղած զինվորներին ու հասարակ ժողովրդին հավաքելով դուրս ելավ նրա դեմ։ Նրանք ընդհարվեցին և Բալբանը իր հետ եղածներով միասին փախուստի մատնվեց և վերադարձավ այն վայրերը, որոնք արդեն իր ձեռքում էին, այսինքն՝ Մանազկերտ, Արճեշ և այլ բերդեր»[43]։ Նույնիսկ Խլաթի տեր դառնալիս Բալբանը չէր կարող իր կամքը թելադրել խլաթցիներին և ստիպված էր համաձայնել քաղաքացիների առաջադրած պահանջների հետ։ Երբ Բալբանը երկրորդ անգամ պաշարեց Խլաթը, քաղաքացիները «լուր ուղարկեցին Բալբանին, երդվել տալով իրենց պայմանները ընդունել և համաձայնեցին քաղաքն ու Բաքտամուրի որդուն [հանձնել նրան]։ Սա տիրացավ Խլաթի բոլոր գավառներին, բանտարկեց Բաքտամուրի որդուն այնտեղի մի բերդում, և ամրապնդվեց նրա իշխանությունը»[44]։ Պատմիչի վերջին պնդումը ճշմարտությունից հեռու է թվում իր իսկ մյուս տեղեկությունների լույսի ներքո։ Այսպես, երբ ալ-Մալիք ալ-Աուհադը պաշարեց և գրավեց Մուշը, Իբն ալ-Ասիրի խոստովանությամբ «Բալբանի դիրքը չէր ամրացել, որ կարողանար նրան դիմադրել»[45]։ Նույնիսկ ալ-Աուհադին մեկ անգամ պարտության մատնելուց հետո էլ, Բալբանը բավականաչափ ուժեր չուներ և հարկադրված էր օգնության կանչել Կարինի տիրակալին, որը և Բալբանի հետ միասին հաղթելով ալ-Աուհադին, դավաճանաբար սպանեց Խլաթի տիրակալին[46]։ Հատկանշական է այն փաստը, որ ո՛չ Բալբանը, ո՛չ Կարինի կառավարիչ Տուղրիլ-շահը, ո՛չ էլ Խլաթին վերջնականապես տիրացած ալ-Աուհադը ղենքի ուժով չկարողացան տիրանալ Խլաթին։ Քաղաքի փաստական տերերը «երիտասարդներն» էին, որոնք «մեկին թագավոր էին նշանակում, մյուսին՝ սպանում»։ Քաղաքային շարժման ճնշումը և Էյուբյանների իշխանության հաստատումը Խլաթում տեղի ունեցավ համառ մարտերի պայ-

---

40 Տե՛ս Իբն ալ-Ասիր, էջ 290։

41 Նույն տեղում, էջ 289։

42 Նույն տեղում, էջ 289—290։

43 Նույն տեղում, էջ 290։

44 Նույն տեղում։

45 Նույն տեղում, էջ 292։

46 Նույն տեղում։

մաններում։ Նույնիսկ այն ժամանակ, երբ Խլաթի բնակիչները լուր ուղարկեցին ալ-Աուհադին և «նա եկավ ու տիրեց Խլաթին ու նրա գավառներին, բացի մի փոքր մասից»[47], իսկական պայքարը նոր միայն սկսվում էր։ Էյուբյանների նկատմամբ ակնհայտորեն թշնամաբար էին տրամադրված շրջակա երկրների տիրակալները, իսկ «քուրջերի» հարձակումները շարունակվում էին։ Ալ-Աուհադը դատապարտված էր շրջափակված մնալու Խլաթում, քանի որ երկյուղում էր քաղաքը կորցնել։ Բանն այն է, որ «Խլաթի զորքերից մի մաս հեռացավ ու գրավեց Վան ամրոցը, որը մեծագույն և ամենից անառիկ բերդերից էր։ Նրանք (անջատված զորքերը) ըմբոստացան Նաջմ ալ-Դինի դեմ։ Նրանց շուրջը զորք հավաքվեց և նրանք գրավեցին Արճեշ (Արջիշ) քաղաքը»[48]։ Այսպիսով, ստեղծվեց այնպիսի իրադրություն, երբ ալ-Աուհադը անկարող էր սոսկ սնփական ուժերով տիրանալ Շահ-Արմենների ժառանգությանը։ Նա ռազմական օգնություն խնդրեց և ստացավ հորից՝ ալ-Ադիլից, Վանը պաշարելու համար ժամանեց նաև եղբայրը՝ ալ-Աշրաֆը։ Բայց բավական էր, որ Վանը գրավելուց հետո ալ-Աշրաֆը վերադառնար, որպեսզի ալ-Աուհադի դրությունը Խլաթի ամիրայությունում կրկին անկայուն դառնար։ Երբ նա մեկնեց Մանազկերտը գրավելու և իրեն ենթարկելու նպատակով, քաղաքային ապստամբությունը ընդգրկեց Խլաթը[49]։ Սոցիալական շարժումը Խլաթում, որը ավարտվեց 1207 թ. հզոր քաղաքային ապստամբությամբ, կարճատև ժամանակով միայն իշխանությունը լիովին հանձնեց քաղաքային բնակչությանը։ Նոր օգնություն ստանալով Ջազիրայից և օգտվելով քաղաքում ծագած ներքին տարաձայնություններից, ալ-Աուհադը շուտով գրավեց Խլաթը և դաժան դատաստան տեսավ ապստամբների հետ[50]։ Քաղաքային բնակչությունը Խլաթում 1207 թ., այնուամենայնիվ, լիովին ջախջախված չէր և նոր ապստամբության սպառնալիքը այնքան իրական էր Խլաթում, որ երբ հիջրի 605 թ. (16/VII 1208—5/VII 1209 թթ.) «քուրջերը» գրավեցին և ավերեցին Արճեշը, ալ-Աուհադը չհամարձակվեց դիմադրություն ցույց տալ ոչ միայն վերջիններիս բազմության, այլև Խլաթի բնակիչներից սպառնացող վտանգի պատճառով, «որոնց նա շատ կոտորել ու վնաս էր պատճառել։ Նա վախենում էր, որ եթե դուրս գա [քաղաքից], այլևս չի կարող վերադառնալ»[51]։ Այդ անկայուն դրությունը, հավանաբար, պահպանվեց մինչև «քուրջերի» հերթական հարձակման և Իվանե Զաքարյանի գերի ընկնելու հետ կապված իրադարձությունների ժամանակները, այսինքն՝ շուրջ 2—3 տարի։ Այնուհետև Շահ-Արմենների պետությունը մտավ Էյուբյանների տիրույթների կազմի մեջ։

Խլաթում XII դարի վերջում—XIII դարի սկզբում ծավալված քաղաքային շարժումը, որը առայժմ չի արժանացել ուսումնասիրողների ուշադրությանը, միջնադարյան հայկական քաղաքների պատմության առավել ուշադրավ դրվագներից է։ Շուրջ մեկ տասնամյակի ընթացքում փաստական իշխանությունը քաղաքում պատկանում էր «ժողովրդին»՝ այսինքն՝ արհեստավորներին, մանր առևտրականներին, քաղաքային չքավորությանը[52]։ Նման իրավիճակը նորություն չէր անգրկովկասյան քաղաքների պատմության մեջ, բայց Խլաթյան օրինակը ժամանակագրական առումով զգալիորեն ավելի ուշ փուլով է թվագրվում (Թբիլիսյան դեպքերի ավարտից ավելի քան յոթ տասնամյակ հետո) և նշանավորում է վերջին դրվագը տարածաշրջանի քաղաքային շարժումների պատմության մեջ։ Մոնղոլական արշավանքներից հետո

---

47 Նույն տեղում։

48 Նույն տեղում։

49 Նույն տեղում, էջ 293։

50 Տե՛ս նույն անդում։

51 Նույն տեղում, էջ 294։

52 Տե՛ս Л. В. Строева. К вопросу о социальной природе исмаилитского движения в Иране в XI—XIII вв.—Вестник ЛГУ, № 20, 1963, с. 45—46.

քաղաքային կյանքի հետագա անկման պայմաններում այդօրինակ շարժումների մասին այլևս խոսք լինել չէր կարող։

Էյուբյանների հսկայածավալ տիրույթների մեջ մտնող Խլաթը և շրջակա գավառները սկսեցին կառավարվել Մալիք Աղիլի ժառանգների կողմից, «որ կոչին Եղլեանք»[53]։ 1210/11 թ. Մալիք Աուհադի մահից հետո Խլաթի ամիրայության տարածքն անցավ նրա եղբայր Մալիք Աշրաֆին[54], որը՝ մեկ տասնամյակ իշխելուց հետո Խլաթը և Նփրկերտը 1221 թ.[55] հանձնեց իր եղբայր Մալիք Մուզաֆֆար ալ-Ղազուն, փոխարենը ստանալով Ուռհան և Սրուճը[56]։ 1224 թ. եղբոր դեմ ապստամբելու պատճառով Մալիք Ղազին կորցրեց Խլաթը և ստիպված էր բավարարվել միայն Նփրկերտով. Խլաթի ամիրայությունում կրկին իշխեց Մալիք Աշրաֆը[57]։

Խորեզմշահ Ջալալ ադ-Դինի դեպի Անդրկովկաս կատարած արշավանքների տարիներին Խլաթում իշխում էր Մալիք Աշրաֆի փոխանորդ Ալի Հուսամ ադ-Դինը[58], քաղաքը էյուբյաններին էր պատկանում նաև 1230 թ. Ջա-

---

53 Կիրակոս Գանձակեցի. Պատմութիւն Հայոց. Երևան, 1961, էջ 151։ Մալիք ալ-Աուհադին Մխիթար Այրիվանեցին կոչում է «Ալաթ» (Մխիթար Այրիվանեցի. Պատմութիւն Հայոց. Մոսկվա, 1860, էջ 65), իսկ Կիրակոս Գանձակեցին հիշատակում է նրա մականունը՝ «Կուզ»։ Աուհադ-Կուզ նույնանձնությունն ակներև է Կիրակոս Գանձակեցու Պատմության այն հատվածից, ուր պատմվում է Խլաթի մոտ Իվանեի գերի ընկնելու և գտերը Խլաթի տիրոջը կնության տալու մասին. «Եւ նորա (Իվանեի—Հ. Մ.) երթեալ ի տուն իւր, առաքեաց զգուստրն իւր, որ եղև կին Կզոյ, և յետ նորա Աշրափին» (Կիրակոս Գանձակեցի, էջ 165)։ Հայ պատմիչի տեղեկությունների ստուգությունը հաստատում է Աբու-լ-Ֆեդան, նշելով, որ «վրացիների թագավորի», այսինքն՝ Իվանեի դուստրն ամուսնացել էր Աուհադի հետ (Արաբական աղբյուրները, էջ 228)։ Հետևաբար, սխալվում է Վարդան Արևելցին, երբ վկայում է, որ Իվանեի գերի ընկնելիս վերջինիս դուստրն ամուսնացել էր Մալիք Աշրաֆի հետ (Վարդան. Հաւաքումն Պատմութեան, էջ 136)։

54 Տե՛ս Արաբական աղբյուրները, էջ 228։ Թե՛ ժամանակագրության և թե՛ տիրակալների հաջորդականության հարցում սխալվում է Ստեփանոս Օրբելյանը. «Ի ՈԿԱ (1212) թվին Մելիք Աշրափն մեռաւ և Մելիք Ավհադինն նստաւ» (Ստեփանոս Օրբելյան, Ժամանակագրութիւն, էջ 24։ Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 38)։ Այս վկայությունը անխաթար տեսքով է պահպանվել Սամվել Անեցու երկը շարունակողներից մեկի մոտ. «Ի թվին ՈԿԱ. Մելիք Ահւադն (տպ. Ահմադն) մեռաւ։ Աշրաֆն նստաւ» (Սամվել Անեցի, էջ 147, տողատակ)։

55 Տե՛ս Արաբական աղբյուրները, էջ 229։ Աբու-լ-Ֆեդայի հաղորդած հիջրի 617 թ. (8/III 1220—24/II 1221) հաստատում են Ստեփանոս Օրբելյանը. «ՌՄԻԳ:ՈՀ (1221)—Մէլիք Խաղինն ի Խլաթ Երեկ» (Ստեփանոս Օրբելյան. Ժամանակագրութիւն, էջ 23։ Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 39) և ՈԿԹ (1220) թվականը նշող հայ ժամանակագիրներից մեկը (Սամվել Անեցի, էջ 147, տողատակ)։ Հարցի վերջնական լուծմանը նպաստում է Իբն ալ-Ասիրը, որը Ղազիի գալուստը Խլաթ ճշգրտորեն թվագրում է հիջրի 618 թ. սկզբով, այսինքն՝ 1221 թ. (տե՛ս Իբն ալ-Ասիր, էջ 306)։

56 Տե՛ս Իբն ալ-Ասիր, էջ 314—315։ Արաբական աղբյուրները, էջ 230։ Ստեփանոս Օրբելյան. Ժամանակագրութիւն, էջ 34։ Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 39։

57 Ինչպես երևում է, կառավարվելով հանդերձ Մալիք Աղիլի որդիների կողմից, Խլաթը համարվում էր Մալիք Աղիլի տիրույթը։ Հովհաննես գրիչը, օրինակ, 1214 թ. ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում գրում է. «Ի սուլտանութեան Մելէքքլետերն, որ տիրէր Եգիպտոսի, և սուրբ տեղեացն՝ մայրաքաղաքին ամենայն տիեզերաց Երուսաղէմի, եւ Դամասկոսի, եւ Եդեսիա, եւ Մոփաց Երկրին, Ղլաթա մինչեւ ի սինաւն Վրաց» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, կազմեց Ա. Ս. Մաթևոսյան. Երևան, 1984, էջ 85)։

58 Տե՛ս Իբն ալ-Ասիր, էջ 331, 336—337, Արաբական աղբյուրները, էջ 231—232։ Шихаб ад-Дин Мухаммад ан-Насави. с. 201—231.

լայ ադ-Դինից վերագրավվելուց հետո մինչև 1232.33 թ., երբ այն նվաճեց Իկոնիայի սուլթան Ալա ադ-Դին Քեյ-Կուբադ I-ը[59]։

Խլաթը մնաց Իկոնիայի սելջուկյան սուլթանության կազմում մինչև 1244 թ., երբ մոնղոլները Խլաթը և շրջակա տարածքները հանձնեցին Իվանե Զաբարյանի դուստր Թամթային[60]։

XIII դարի սկզբում նշանակալիորեն բարդացավ Հայաստանի ոչ միայն հարավային, այլև հյուսիս-արևմտյան շրջանների՝ օտար լուծը թոթափելու գործը։ Եթե Հարավային Հայաստանում ամրապնդվեցին էյուբյանները, ապա հյուսիս-արևմուտքում ծավալապաշտական հավակնություններով հանդես եկան Իկոնիայի սուլթանները։ Բասենի ճակատամարտում 1202 թ. կրած պարտությունը, ճիշտ է, հարկադրեց սելջուկներին դադարեցնել առաջխաղացումը, սակայն նրանց պետությունը շարունակում էր մնալ Վրաստանի ամենահզոր ախոյանը Փոքր Ասիայում։ 1214 թ. Իկոնիայի սուլթան Իզ ադ-Դին Քեյ-Քավուս I-ը (1210—1219) «տիրէր երկրին Հոռոմոց, Կեսարիոյ, Սեբաստոյ եւ

---

[59] Տե՛ս Հ. Գ. Մարգարյան. Ջալալ ադ-Դինի Հայաստան և Վրաստան կատարած արշավանքների պատմության շուրջ.—«Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 4, էջ 136։

[60] Ռաշիդ դլխավորությամբ կատարված մոնղոլական արշավանքը և Խլաթի գրավումը ընդունված է թվագրել 1245 թ. (տե՛ս Հ. Մանանդյան. նշվ. աշխ., էջ 228։ Հայ ժողովրդի պատմություն, հ. III, էջ 612), որը, սակայն, Կիրակոս Գանձակեցու տեղեկությունների թյուր ընկալման հետևանք է։ Պատմիչի ժամանակագրական ցուցումը՝ «դարձեալ ի մտանել ամին երկրորդի փախուցանելոյ զՂիաթադին սուլտանն» (Կիրակոս Գանձակեցի, էջ 232), ընկալվել է այն առումով, որ խոսքը վերաբերում է 1243 թ. Ջմանկատուկի (Քոսե-դաղ) ճակատամարտում Ղիաս ադ-Դին II սուլթանի (1237—1246) պարտությունից երկու տարի անց տեղի ունեցած դեպքերին, այնինչ Կիրակոս Գանձակեցու նախորդ վկայությունների և այլ աղբյուրների համադիր՝ քննությունը բացառում է նման եզրակացության հնարավորությունը։ Հայ հեղինակը, պատմելով 1243 թ. արշավանքի բարեհաջող ավարտի և ձմեռելու նպատակով մոնղոլական զորքի Հայաստան և Աղվանք վերադառնալու մասին, այնուհետև հաղորդում է Կիլիկիայի հայկական պետության և մոնղոլների միջև կնքված դաշինքի մասին. «Մեծարանօր յարգեցին զդեսպանսն արքայի (Հեթում I-ի—Հ. Մ.), և կարգեցին նոցա ռոճիկս և երիվարաց նոցա՝ զժամանակս ձմերանն, զի ի լինել զարնանոյն ընդ նոսին երթիցեն յաշխարհն իւրեանց։ Հաստատեցին և սէր ընդ արքայի, ետուն և գիր ըստ դենին իւրեանց, զոր էյ-սամզոյն կոչէին։ Եւ այսպէս սպասէին՝ մնալով եղանակին գարնան, յորում միւսանգամ եկիցեն ի վերայ սուլտանին և աշխարհի նորա» (էջ 285—286)։ Բնական է, որ մոնղոլները հաջորդ իսկ՝ 1244 թ. պետք է զարգացնեին նախորդ տարվա հաջողությունը և ոչ թե Իկոնիայի սելջուկներին ուշքի գալու և նորից համախմբվելու հնարավորություն ընձեռեին։ Հետևաբար «ի մտանելն ամին երկրորդի» պետք է ըմբռնել հաջորդ տարվա իմաստով։ Ստեփանոս Օրբելյանին. հատկացվող ժամանակագրությունը մոնղոլների այդ նույն արշավանքը՝ «Թաթարն ի Հալապա[յ] դուռն գնաց և զԲաղէշ էառ» (Ստեփանոս Օրբելյան. Ժամանակագրութիւն. էջ 25։ Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 43, հմմտ. Կիրակոս Գանձակեցու վկայությունը. «Տան (մոնղոլները—Հ. Մ.) ի ձեռս նորա (Թամթայի—Հ. Մ.) զԽլաթ և զգաւառսն՝ որ շուրջ զնովաւ, և ինքեանք ասպատակ սփռեալ ընդ կողմանս ի Միջագետս Ասորւոց, յԱմիթ և յՈւռհայ և ի Մծբին և ի Շամբին երկիրն», էջ 292—293) թվագրում է ՌՄԽԶ—ՈՂԳ= 1244 թվականով, որը միանգամայն ընդունելի է։ Անանուն Սեբաստացի տարեգիրը, որը իր երկը շարադրել է հիմնվելով Վարդան Արևելցու և Կիրակոս Գանձակեցու Պատմությունների վրա, թյուր ընկալելով վերոհիշյալ վկայությունները, Խլաթի գրավումը մոնղոլների կողմից դնում է 1245 թ. (տե՛ս Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ. հ. II, Երևան, 1956, էջ 140)։ Ըստ Ռաշիդ ադ-Դինի, այդ արշավանքը տեղի է ունեցել հիջրի 642 թ. (9/VI 1244—30/IV 1245 թթ.) (տե՛ս Рашид-ад-Дин. Сборник летописей. Т. II, М.—Л., 1960, с.125)։ Մոնղոլների առաջխաղացումը, սկսվելով գարնանը, ամռանը տոթի պատճառով դադարեցվել էր (տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 292—293)։ Հետևաբար, պարսիկ պատմիչի նշած հիջրի 642 թ. պետք է կոնկրետացնել ամռան ամիսներն ընդգրկող առաջին հատվածով և համապատասխան համարել Ստեփանոս Օրբելյանի նշած 1244 թ.։

Կանին եւ այլ բազում մայրաքաղ[աք]աց, եւ Սինոպին, մինչև ի ծովն Լիբէացոց»[61]։ Իկոնիայի սուլթանությունը առանձնակի հզորության հասավ Ալա ադ-Դին Քեյ-Կուբադ I-ի (1219—1237) օրոք, որի նախաձեռնությամբ վերսկսվեց սելջուկների առաջխաղացումը դեպի Հյուսիս-արևմտյան Հայաստան։ XIII դարի 30-ական թթ. սկզբին Իկոնիայի սուլթանությունը զգալիորեն ընդարձակվեց դեպի հարավ և արևելք, բախման մեջ մտնելով էյուբյանների և Վրաստանի հետ[62]։ Չնայած ակնառու ռազմական հաջողություններին, ներքաղաքական իրադրությունը Իկոնիայի սուլթանությունում մոնղոլական ներխուժման նախօրյակին տագնապալից էր։ Դիաս ադ-Դին Քեյ Խոսրով II-ին (1237—1246) միայն մեծ ջանքերի գնով հաջողվեց ճնշել այն ապստամբությունը, որը գլխավորում էր դերվիշ Բաբա Իսահակը, հայտնի Ռասուլ անվանումով. «Սուտ վարդապետ մի յարեաւ Մահմետի ի Հոռոմք և անուանեաց զինքն Բաբ Ռասուլ և յետ սակաւուց բարձաւ չարն ի միջոյ»[63]։ Թե որքան խախուտ էր սուլթանությունը ներսից, ցույց տվեցին մոնղոլական արշավանքները։ 1243 թ. Զմանկատուկի (Քոսե-դաղ) ճակատամարտում կրած պարտությունը ճակատագրական դարձավ Իկոնիայի սելջուկյան սուլթանության համար, որը այսուհետև մոնղոլներին ենթակա երկրներից մեկն էր Փոքր Ասիայում։

XII դարի վերջի—XIII դարի սկզբի Մերձավոր Արևելքի քաղաքական կյանքի ուշագրավ կողմերից մեկը մահմեդական փոքր ամիրայությունների կուլ գնալն էր անհամեմատ խոշոր պետական կազմավորումներին։ Այդ պրոցեսը բացասաբար անդրադարձավ հայկական երկրամասերի ազատագրման ընթացքի վրա, հայ-վրացական զորքերին դուրս բերելով այնպիսի հզոր ուժերի դեմ, ինչպիսիք էին էյուբյանների պետությունը և Իկոնիայի սուլթանությունը։

Այսպես, սկսած XII դարի կեսերից իրենց դիրքերը խիստ զիջեցին Արտուխյանները, որոնք հարկադրված էին ընդունել շրջակա ավելի հզոր քաղաքական կազմավորումների գերակայությունը։ Արդեն XII դարի վերջում նրանք այլևս չէին կարողանում մասնակցել քրիստոնյաների դեմ ուղղված մահմեդական ամիրայությունների ռազմական ձեռնարկումներին։

Արտուխյանների ճակատագիրը կիսեցին Բաղեշի և Արզնի տիրակալ Թուղան Արսլան ալ-Ահդաբի ժառանգները՝ Ահդաբյանները։ Ինչպես ասվեց, XII դարի վերջին Բաղեշը նրանցից խլեցին Շահ-Արմենների ամիրայության տիրակալները, իսկ վերջին հենակետը՝ Արզնը, 1230/31 թ. գրավեցին էյուբյանները[64]։

XII դարի վերջում ծանր օրեր էին ապրում նաև Կարինի Սալդուխյանները, որոնք ենթարկվում էին ինչպես Վրաստանի, այնպես էլ Իկոնիայի սուլթանության ճնշմանը։ Տոհմի ամենանշանավոր ներկայացուցիչ Իզ ադ-Դին Սալդուխի մահից հետո նրա ժառանգորդները կորցրել էին նախկին հզորությունը։ 1201 թ. Կարինը Սալդուխյաններից գրաված Իկոնիայի սուլթան Ռուքն ադ-Դինը (1196—1204) և հանձնեց եղբորը՝ Մուղիս ադ-Դին Տուղրիլ-շահին, սակայն Սալդուխյանները մինչև XIII դարի 30-ական թթ. պահպանում էին նախկին տիրույթների մի մասը՝ Մժնկերտ ամրոցը իր շրջակայքով[65]։

61 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 85։

62 Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 4, էջ 136։

63 Ստեփանոս Օրբելյան. Ժամանակագրություն, էջ 25։ Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 41, հմմտ. Սամվել Անեցի, էջ 150, տողատակ։ Վ. Ա. Գորդլևսկին Բաբա Իսահակի ապստամբությունը թվագրում է 1239 թ. (տե՛ս В. А. Гордлевский. Государство Сельджукидов Малой Азии—Избранные сочинения. Т. I, М., 1960, с. 126—129), իսկ Ք. Է. Բոսվորթը՝ 1240-ով (տե՛ս К. Э. Босворт. Указ. соч., с. 180). որը և հաստատվում է Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ։

64 Տե՛ս Իբն ալ-Ասիր, էջ 340—341։ Արաբական աղբյուրներ, էջ 233։

65 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. III, էջ 490։ А. А. Хачатрян. Корпус арабских надписей Армении VIII—XVI вв., вып. I, Ереван, 1987, с. 63—64.

Ուշադրավ է այն հանգամանքը, որ XIII դարի սկզբում հնարավոր եղավ ազատագրել այն փոքր ամիրայությունների տարածքը, որոնք ամփոփված էին հիմնականում քաղաքների շրջանակներում և ընդունում էին իրենց հզոր հարևանների գերակայությունը, խուսափելով այդ պետությունների մի սասը դառնալու սպառնալիքից։ Այսպես, Կարսի ամիրաները XII դարի կեսերին ընդունում էին Կարինի Սալդուխյանների, իսկ հետագայում՝ Շահ-Արմենների գերակայությունը[66]։ Սուրմարիի տերը XIII դարի 20-ական թթ. հպատակվում էր Խլաթի էյուբյաններին[67], իսկ 1225 թ. Գառնիի ճակատամարտում խորեզմշահի՝ հայ-վրացական բանակի նկատմամբ հաղթանակ տանելուց հետո քաղաքի ամիրաները հնազանդվեցին Ջալալ ադ-Դինին և ծառայության անցան նրա մոտ։ Հինգ տարի անց, Յասսի Չիմանի ճակատամարտում Իկոնիայի սուլթանության և էյուբյանների միացյալ բանակից խորեզմցիների կրած պարտությունից հետո, Ջալալ ադ-Դինը Սուրմաբին վերադարձրեց էյուբյաններին[68]։

XII դարի վերջում սպառվեցին Վրաստանի անմիջական հարևան Անիի Շեդդադյանների պաշտպանական հնարավորությունները։ Անիի համար մղվող պայքարը, տեսնելով շուրջ մեկ հարյուրամյակ, վերջ ի վերջո ավարտվեց Շեդդադյանների պարտությամբ։ Քաղաքը չորրորդ անգամ գրավվելուց հետո անցավ Ջաքարե ամիրսպասալարին և նրա սերունդներին։ Վերջին Շեդդադյանների օրոք հանուն քաղաքային ազատությունների և ինքնավարության մղվող պայքարում տնեցիները հասել էին զգալի հաջողությունների։ Անիի հայ բնակչությունն այդ տարիներին իրեն այնքան հզոր էր զգում, որ 1186 թ. անեցիները, առանց երկնչելու շրջակա ամիրայությունների վրեժխնդրությունից, հարձակվեցին ու գրավեցին Բարսեղ արքեպիսկոպոսի և նրա եղբայրների «հայրենիք» Ծառաքար ամրոցը, որն այդ ժամանակ պատկանում էր Խդիլ Արսլանին[69]։

Առայժմ ընդհանուր տեսակետ գոյություն չունի Անիի վերջին Շեդդադյան ամիրայի ինքնության և իշխանության տարիների շուրջ, թեև վիմագրական նյութը հնարավորություն է ընձեռում պատասխանել այդ հարցերին։ Ինչպես արդեն 1849 թ. Անիի 1198/99 թ. պարսկերեն արձանագրության հրատարակիչ Մ. Խանիկովը Շեդդադյանների տոհմածառի մեջ էր մտցրել այդ արձանագրությունում հիշատակվող Քեյ-Սուլթանին[70], նորագույն աշխատություններում վերջինիս գոյությունը ժխտվում է։ Վ. Մինորսկու կարծիքով, արձանագրությունում պարզապես պարսկերենից արաբերեն է թարգմանված Շահնշահ ամիրայի անունը, ուստի նա, թեև որոշ կասկածով, երկուսին նույնացրել է[71]։ Սակայն Սուլթանը «սպասալար» տիտղոսով հիշատակվում է նաև Թալինի 1174 թ. արաբերեն արձանագրությունում, ուստի այդ վիմագրի վերջին հրատարակիչ Ա. Խաչատրյանը իրավացիորեն մերժում է Վ. Մինորսկու

---

66 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. III, էջ 492։

67 Տե՛ս Ի բ ն ա լ-Ա ս ի ր, էջ 312։

68 Տե՛ս Ш и х а б а д-Д и н М у х а м м а д а н-Н а с а в и, с. 159, 259.

69 Տե՛ս Վ ա ր դ ա ն. Հաւաքումն Պատմութեան, էջ 174—175։ Մ խ ի թ ա ր Ա ն ե ց ի. Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխատասիրությամբ Հ. Գ. Մարգարյանի. Երևան, 1983, էջ 109—110։

70 Տե՛ս M. B r o s s e t. Quelques inscriptions musulmanes de Ani et des environs de Bakou: extrait d' une lettre de M. Khanykoff. — Me'langes Asiatiques, t, I, 1-re livr.. SPb., 1849, p. 73. Արձանագրության երկրորդ հրատարակությունը իրականացրել է Լ. Տ. Գյուզալյանը, տե՛ս Л. Т. Г ю з а л ь я н. Персидская надпись Кей-Султана Шеддадида в Ани.—Академия Наук СССР — академику Н. Я. Марру, М.—Л., 1935, с. 629—641.

71 Տե՛ս V. M i n o r s ky. Studies in Caucasian History. London, 1953, p. 101, 106.

տեսակետը «Շահնշահ» անվան թարգմանության վերաբերյալ, բայց այնուամենայնիվ ընդունում է «Շահնշահ-Սուլթան» նույնանձնացումը[72]։ Սակայն Վարդանի Պատմությունից գիտենք, որ Շահնշահը 1174 թ. Վրաստան գերի տարվելուց հետո այլևս չվերադարձավ Անի[73], հետևաբար, ինչպես վկայում է Թալինի արաբերեն արձանագրությունը, նույն թվականի սեպտեմբերին նրան հասցրել էր հաջորդել եղբայրը՝ Սուլթանը։ Վերջինիս անունը գիտական գրականության մեջ տարածված է նաև Քեյ-Սուլթան կամ Քայ-Սուլթան թուրձևերով, որի պատճառը, Վ. Մինորսկու համոզիչ պարզաբանմամբ, «Քեյ» հաբաբերական դերանունն անձնանվան մաս համարելն է եղել[74]։ Այսքանից հետո պարզ է, որ Անիի վերջին Շեդդադյան Սուլթանն է հիշատակվում Անիի 1193 թ. հայերեն արձանագրությունում[75], և XII դարի վերջին վերագրելի Շիրաեավանի անթվական վիմագրերից մեկում. «Միջնորոութեամբ տեառն Բարդղի եպիսկոպոսի և յաւագութեանս Անոյ Սուլթանին»[76]։ Այսպիսով, Շեդդադյանների տոհմածառը անհրաժեշտ է լրացնել և վերջին Շեդդադյանի կառավարման ժամանակահատված համարել 1174—1199 թթ.։

Ընդհանուր առմամբ գնահատելով քաղաքական իրադրությունը Մերձավոր Արևելքում ու Անդրկովկասում XII դարի 80-ական թթ. մինչև XIII դարի 30-ական թթ. ընկած հիսնամյակում, կարելի է ասել, որ այն խիստ բարդ և հարափոփոխ ժամանակաշրջան էր։ «Մեծ սելջուկների» տերության փլատակների վրա գոյացած ամենատարբեր չափերի և հզորության քաղաքական կազմավորումներն ապրում էին մի կողմից ներքին խմորումների ու դժվարությունների, մյուս կողմից էլ՝ վերախմբավորման ու ավելի խոշոր պետական միավորումների մեջ համախմբվելու ժամանակաշրջան։ Քանի դեռ այդ պրոցեսները չէին ավարտվել՝ Վրաստանի և Հյուսիս-արևելյան Հայաստանի համար արտաքին քաղաքական իրադրությունը բարենպաստ էր և ավելի շատ հարձակողական, քան պաշտպանական քաղաքականություն վարելու հնարավորություն էր ընձեռում։ Այսպես, XII դարի 90-ական թթ. Անիի Շեդդադյանների թուլացումը, միաժամանակ Ելտկուզյանների ու Շահ-Արմենների արտաքին քաղաքական դժվարությունները և ներքին պայքարը նախադրյալներ ստեղծեցին Բագրատունյաց մայրաքաղաքի և Արագածոտնի աղատագրման համար։ XIII դարի սկզբից մինչև Ելտկուզյանների աթաբեկության վերացումն ընկած ժամանակաշրջանում Զաքարյանները հաստատվեցին Հայաստանի կենտրոնական և հյուսիս-արևելյան շրջաններում՝ Դվինում, Սյունիքում, Արցախում։ Փոխարենը՝ Էյուբյանների խլաթին տիրելուց հետո Զաքարյաններին չհաջողվեց հիմնավորվել Արաքսից հարավ ընկած հայկական գավառներում։ XIII դարի սկզբում՝ Կարսի գրավումից հետո, երբ տեղի ունեցավ Իկոնիայի սուլթանության նոր վերելք, կայուն սահմանագիծ առաջա-

---

72 Տե՛ս А. А. Хачатрян. Нижнеталинская арабская надпись 570/1174 года.— «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 4, էջ 195, ծան. 40։ Նույնի՝ Корпус..., с. 46։

73 Տե՛ս Վարդան. Հաւաքումն Պատմութեան, էջ 169։ Տարօրինակ տրամաբանությամբ է առաջնորդվում Զ. Մ. Բունիաթովը, որի կարծիքով Թամար թագուհու առաջին պատմիչի տեղեկությունը՝ Անին «նախկին տերերի ազգականին» հանձնելու վերաբերյալ (տե՛ս ქართლის ცხოვრება, ტ. II, თბ., 1959, გვ. 15) հերքում է Շահնշահի ճակատագրի մասին Վարդանի վկայությունը (տե՛ս З. М. Буниятов. Указ. соч., с. 60)։ Մի՞թե Սուլթանը նույնչափ իրավունք չուներ համարվելու «նախկին տերերի ազգական», որչափ նրա եղբայր Շահնշահը։

Տե՛ս V. Minorsky. Op. cit., p. 100, not. 1. հմմտ. А. А. Хачатрян. Нижнеталинская арабская надпись 570/1174 года, с. 197, прим. 58։ «Մոռանալով» հիշատակել ռուն հեղինակին, Վ. Մինորսկու բացատրությունը կրկնել է Զ. Մ. Բունիաթովը (տե՛ս З. М. Буниятов. Указ. соч., с. 60, прим. 70)։

75 Տե՛ս Ղ. Ալիշան. Շիրակ. Վենետիկ, 1881, էջ 85։ Դիվան հայ վիմագրության, պրակ 1, Երևան, 1966, էջ 47։

76 Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 10։

ղում նաև Հայաստանի հյուսիս-արևմուտքում։ Հետևաբար, XII դարի վերջում—XIII դարի սկզբում Զաքարյանները իրական հնարավորություններ ունեին Հայաստանի միայն հյուսիսային, կենտրոնական և հյուսիս-արևելյան շրջանների ազատագրման համար։

XIII դարի 20-ական թթ. Անդրկովկասում նախ մոնղոլների, ապա նաև խորեզմցիների հայտնվելուց հետո, երբ ծանր փորձություններ ենթարկվեցին ոչ միայն վրացական թագավորությունը, այլև էյուբյանները, իսկ Սելջուկյաններն ընդհանրապես հեռացան պատմական ասպարեզից, Զաքարյան իշխանները շուրջ մեկ տասնամյակի ընթացքում չկարողացան նշանակալի հաջողությունների հասնել։ Նրանք կրկին հանդես եկան հայկական երկրամասերի ազատագրման նախաձեռնությամբ միայն XIII դարի 30-ական թթ. առաջին կեսում, մոնղոլական ալիքավոր արշավանքի անմիջական նախօրեին, երբ Վահրամյանները վերստին ազատագրեցին Շամքորը[77], իսկ Զաքարե ամիրսպասալարի սերունդները վերջապես անցան Արաքսը և տիրացան Սուրմարիին և Կաղզվանին[78]։ Այսպիսով, բարենպաստ իրադրություն ստեղծվեց Հարավային Հայաստանում առաջխաղացումը շարունակելու համար, քանի որ դարձյալ պայքար էր բորբոքվել Իկոնիայի սելջուկների և էյուբյանների միջև հանուն Շահ-Արմենների ժառանգության։ Դժբախտաբար, հենց այդ պահին էլ հասավ առավել ծանր հարվածը։ Իրադարձությունների հետագա ընթացքը կանխորոշեց 1236 թ. մոնղոլական արշավանքը, որը բացառիկ կարճ ժամանակամիջոցում արտասովոր հաջողություններ բերեց նվաճողներին։ Կովկասյան քաղաքական և մշակութային աշխարհի համար արտաքին կացությունը կտրուկ կերպով վատթարացավ։ Հայ ժողովրդի համար սկսվեց մաքառումների և հանուն գոյատևման մղվող պայքարի երբեմն ժամանակաշրջան։

ПОЛИТИЧЕСКАЯ ОБСТАНОВКА НА БЛИЖНЕМ ВОСТОКЕ И ПЕРСПЕКТИВА ОСВОБОЖДЕНИЯ АРМЕНИИ (XII—XIII вв.)

А. Г. МАРГАРЯН

Резюме

Исследование военно-политической обстановки в Закавказье и на Ближнем Востоке в целом имеет первостепенное значение для выяснения хронологии и направлений освободительной борьбы, возглавляемой Захаридами. Закат могущества атабекства Элдигюзидов и эмирата Шах-Арменов был в значительной степени обусловлен важными внутренними процессами в самих эмиратах. Борьба между внуками атабека Элдигюза в 90-х годах XII в. положила конец их влиянию на Ближнем Востоке и ускорила освобождение центральных районов Армении, Сюника и Утика. В южной Армении, в эмирате Шах-Арменов, сталкивались интересы различных группировок военной служилой знати, чем воспользовались Аюбиды, присоединив Хлат и прилегающие районы к своим владениям. Процесс консолидации был характерным и для северо-западных районов Армении, где небольшие политические единицы подверглись аннексии султанов Иконии. Таким образом, освободительная борьба на юге и северо-западе не имела шансов на успех. Обстановка еще более ухудшилась с первым появлением монголов (1220—1221 гг.), а затем и хорезмийцев (1225—1231 гг.), остановивших продвижение Захаридов и других армянских правителей. В свою очередь, монгольский поход 1236 г. полностью перечеркнул успех предшествующей эпохи и поставил кавказский мир в исключительно неблагоприятные условия. Историческая перспектива освобождения армянских земель и восстановления независимости страны оказалась нереализованной.

77 Տե՛ս Ա. Ի. Շահնազարյան. Վահրամյանների իշխանությունը մոնղոլների Հետախուզական արշավանքի և Ջալալ էդ-Դինի նվաճումների ժամանակ.—«Երևանի հասարակական գիտություններ», 1980, № 6, էջ 62։

78 Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 4, էջ 137։